ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«01» մայիսի 2025 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգելի հայրենակիցներ, սիրելի համաքաղաքացիներ

Սրտանց շնորհավորում եմ ձեզ Մայիսի 1-ի՝ Աշխատավորների միջազգային օրվա առթիվ:

Այս օրը խորապես խորհրդանշական է՝ այն մեծարում է արարող մարդու ջանքն ու նվիրվածությունը, ով իր ամենօրյա բարեխիղճ աշխատանքով նպաստում է ոչ միայն սեփական ընտանիքի բարօրությանը, այլև համայնքի, երկրի և ամբողջ հասարակության զարգացմանը:

Մեր համայնքի ուժը եղել և մնում է աշխատավոր մարդը՝ հողագործը, ուսուցիչը, արհեստավորը, բժիշկը, գործարարը և բոլոր նրանք, ովքեր հավատով ու պատասխանատվությամբ կատարում են իրենց գործը:

Մեր երկրի ապագան կերտվում է ձեր ձեռքերի աշխատանքով, ձեր կամքի ամրությամբ ու հոգու ջերմությամբ:

Կրկին շնորհավորելով աշխատանքի օրվա առթիվ՝ մաղթում եմ բոլորիս խաղաղ և ստեղծագործ աշխատանք՝ ի շահ մեր համայնքի, մեր երկրի կայուն զարգացման և առաջընթացի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՈՒԳՈՐՅԱՆ